Արձանագրություն N 2

ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գնման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14.11.2017թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սարիբեկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաթևոսյան / գնահատող /
Ն. Մարտիրոսյան / բացող /
Ն. Մանուկյան / բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր
հանձնաժողովի անդամ՝ Ա.Քոչարյան /գնահատող/

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Մ.Սարիբեկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի նոյեմբերի 9-ին, ժամը 11:30-ին.

բ) գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 2 458 600 (երկու միլիոն չորս հարյուր հիսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ.

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<ՀՀ նախագծերի պետա-կան արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	ք. Երևան, Հալաբյան 41ա	250 000	50 000	300 000
2	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	ք. Եղվարդ, Նար Դոսի փողոց 28 ա	440 000	-	440 000
3	<<Մառք>> ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտասի պող. 54 Վ, տարածք 304	747 000	-	747 000
4	<<Վահրամ Կնյազյան>> ԱՁ և <<Տամո-Շին>> ՍՊԸ	Բաղրամյան փող 12, բն.2	780 000	-	780 000
5	<<ԳՐԻՏԻԳ>> ՍՊԸ	Արարատի մարզ, գ.Ոստան, Թեհլերյան 14	1 190 000	-	1 190 000

դ) ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել հայտերի արդյունքների ամփոփմանը հաջորդող աշխատանքային օրը.

ե) հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած <<Մառք>> ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել <<Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն>> լիցենզիան և նրան կից՝ ներդիրները:

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջը՝ ծանուցել <<Մառք>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել <<Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն>> լիցենզիան և նրան կից՝ ներդիրները:

<<Մառք>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են վերը նշված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Մ.Սարիբեկյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	բավարար
2	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	բավարար
3	<<Մառք>> ՍՊԸ	բավարար
4	<<Վահրամ Կնյազյան>> ԱՁ և <<Տամո-Շին>> ՍՊԸ	բավարար
5	<<ԳՐԻՏԻԳ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Մ.Սարիբեկյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից պատասխանը ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2017 թվականի նոյեմբերի 20-ը ժամը 11:30-ն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Սարիբեկյան

Անդամ՝ ---------- Ս. Մաթևոսյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան